Կարգապահական գործ թիվ ԿԳ-25066

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԷԼԱԴԱ ԷԴՈՒԱՐԴԻ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ և զեկուցող անդամ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ դիմող Աննա Հարությունյանի և փաստաբան Էլադա Ղահրամանյանի,

քննության առնելով փաստաբան Էլադա Էդուարդի Ղահրամանյանի (արտոնագիր՝ ԱՀ թիվ 67, հավատարմագիր՝ թիվ 47) **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Տ՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

Աննա Հարությունյանը **(այսուհետ նաև՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ Պալատ),** հայտնել է, որ իր իրավունքների ու շահերի պաշտպանության նպատակով դիմել է փաստաբան Էլադա Ղահրամանյանին:

Այդ կապակցությամբ Դիմողի և փաստաբանի միջև կնքվել է պայմանագիր **(այսուհետ նաև՝ Պայմանագիր),** որով փաստաբանը պետք է իրականացներ վերջինիս շահերի պաշտպանությունը թիվ ԱՐԴ/0724/02/24 քաղաքացիական գործով ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի, ՀՀ վերաքննիչ և ՀՀ վճռաբեկ դատարաններում, ինչի համար Դիմողը վճարել է համապատասխան գումարը:

Ըստ Դիմողի՝ փաստաբանը 2025 թվականի սկզբին հրաժարվել է ծառայությունների հետագա մատուցումից, մինչդեռ գործի քննությունը ավարտված չէր նույնիսկ ՀՀ

Թիվ ԿԳ-25066-2-Ա
18.06.2025թ.

առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում և 29.04.2025 թվականի ժամը 15:20-ին նշանակված էր դատական նիստ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 02.05.2025 թվականին Դիմողին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 05.05.2025 թվականի գրությամբ հայտնել է, որ գտնվում է արտերկրում բուժման նպատակով և չի կարող ներկայացնել այլ փաստաթուղթ:

Դիմողը հայտնել է, որ Փաստաբանին 276.000 դրամ գումարը փոխանցել է ամբողջությամբ՝ բանկային քարտին, իսկ առձեռն՝ 250.000դրամ:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Էլադա Էդուարդի Ղահրամանյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Աննա Հարությունյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 26.03.2025 թվականի բացատրությամբ հայտնել է, որ Դիմողի շահերի պաշտպանության ապահովման նպատակով իրականացրել է մի շարք գործողություններ՝ կատարել է հարցումներ, կազմել և դատարան է ներկայացրել հայցադիմում, մասնակցել դատական նիստերին:

Փաստաբանի պնդմամբ, 03.03.2025 թվականին դատարանը թիվ ԱՐԴ/0724/02/24 քաղաքացիական գործով անցել էր վճռի հրապարակման, ինչի մասին տեղեկացրել էր Դիմողին և այդ պահից համարել է դադարեցրած իր և Դիմողի պարտավորությունները:

Փաստաբանը նշել է, որ Դիմողը վճարել է Պայմանագրի գնի միայն մի մասը, որից էլ Փաստաբանը վճարել էր նաև պետական տուրք:

Փաստաբանը հավելել է, որ 10.03.2025 թվականին Դիմողը կապ է հաստատել իր հետ, խնդրելով ներկայացնել իր շահերը նաև վերաքննիչ դատարանում, սակայն Փաստաբանը հրաժարվել է, պատճառաբանելով, որ իր պարտավորությունները դադարած են, իսկ Դիմողն իր հերթին չի վճարել Պայմանագրի գինն ամբողջությամբ:

Ըստ Փաստաբանի, դրանից հետո Դիմողը փորձել է վարկաբեկել Փաստաբանին «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում:

Վերոգրյալի հաշվառմամբ, Փաստաբանը խնդրել է մերժել կարգապահական վարույթի հարուցումը:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 02.05.2025 թվականին Փաստաբանին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 12.05.2025 թվականի բացատրությամբ ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը, հավելելով, որ իր և Դիմողի միջև կնքված պայմանագիրը միակողմանի լուծված չէ, իսկ իր լիազորությունները դադարեցված չեն:

Փաստաբանի պնդմամբ, Դիմողն իրեն խնդրել է տարաժամկետել պայմանագրով

նախատեսված պարտադիր վճարները՝ ճանապարհածախսի, պետական տուրքի, հարկերի հետ կապված վճարների մասով:

Փաստաբանը հայտնել է, որ տեղեկացրել է Դիմողին գործի վերսկսվելուց հետո նոր նիստ նշանակված լինելու մասին, ինչի կապակցությամբ էլ ուղարկել է հաղորդագրություն, որ Դիմողը անձամբ որոշի երբ և ինչպես պետք է կատարի պարտադիր վճարները կատարվի:

Փաստաբանը հավելել է, որ Դիմողի դժգոհությունը ծագել է նշված հարցի կապակցությամբ, երբ Փաստաբանը հրաժարվել է կատարել գործողություններն իր հաշվին, ինչը պայմանագրի գնի մեջ չէր մտնում:

Փաստաբանը նշել է, որ իրեն վճարված գումարի շրջանակներում կատարել է անհրաժեշտ գործողություններ և դրանք սպառվել են թիվ ԱՐԴ/0724/02/24 քաղաքացիական գործով դատական ակտի հրապարակման օրվա նշանակմամբ:

Փաստաբանը ներկայացրել է ՀՀ արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանից ստացված ծանուցումն առ այն, որ 22.05.2025 թվականին ժամը 23:40-ին նշանակված է դատական նիստ:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 04.04.2025թ. թիվ 135-Ա/ԿԳ-25066 որոշմամբ փաստաբան Էլադա Էդուարդի Ղահրամանյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 3.8.2 և 3.8.4 (1) ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

08.04.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 06.06.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-4-րդ կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 18.06.2025թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի

առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը՝ թիվ ԱՐԴ/0724/02/24 քաղաքացիական գործով ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի, ՀՀ վերաքննիչ և ՀՀ վճռաբեկ դատարաններում, ինչի կապակցությամբ Դիմողը վճարել է Պայմանագրի գինն ամբողջությամբ: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, վերջիններիս միջև կնքված թիվ 10/40 պայմանագրով, ինչպես նաև լիազորագրով:*

2. Թիվ ԱՐԴ/0724/02/24 քաղաքացիական գործով Դատարանի 03.03.2025թ. որոշմամբ գործի քննությունը վերսկսվել է և դատական նիստը է նշանակվել 29.04.2025 թվականին, իսկ այնուհետև՝ 22.05.2025 թվականին: ***Նշված փաստը հաստատվում է*** *թիվ ԱՐԴ/0724/02/24 քաղաքացիական գործի վերաբերյալ «դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

3. Դիմողի և Փաստաբանի միջև կնքված Պայմանագիրը (միակողմանի փաստաբանի կողմից) չի լուծվել: ***Նշված փաստը հաստատվում է*** *Փաստաբանի և Դիմողի բացատրություններով:*

4. Թիվ ԱՐԴ/0724/02/24 քաղաքացիական գործով Դատարանի 04.06.2025 թվականի վճռով Դիմողի հայցը բավարարվել է: ***Նշված փաստը հաստատվում է*** *թիվ ԱՐԴ/0724/02/24 քաղաքացիական գործի վերաբերյալ «դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները</u>.

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Էլադա Ղահրամանյանի փաստաբան է հանդիսանում 05.12.2013 թվականից, և տեղեկանքը տրամադրելու օրվա դրությամբ չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>.

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Էլադա Էդուարդի Ղահրամանյանի նկատմամբ 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.8.2 և 3.8.4 (1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 17.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***այլ պետության փաստաբանը*** *Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական* ***գործունեությունն իրականացնում է նույն օրենքով****, փաստաբանների պալատի կանոնադրությամբ և* ***փաստաբանի վարքագծի կանոնագրքով սահմանված կարգով****, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***այլ պետության փաստաբանը Հայաստանի Հանրապետությունում գործում է իր պետության համապատասխան*** *փաստաբանական կառույցի* ***փված արտոնագրի հիման վրա*** *և պետք է փաստաբանների պալատի կանոնադրությամբ նախատեսված կարգով հավատարմագրվի փաստաբանների պալատում:*

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք.*

Կանոնագրքի 3.8.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը, եթե օրենքը չի արգելում և այլ բան նախատեսված չէ պայմանագրով, իրավունք ունի հրաժարվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հետևյալ հիմքերով՝*

1) վստահորդը փաստաբանի պարզաբանումներին հակառակ կատարում է գործողություններ կապված հանձնարարության հետ, որոնք օրենքով արգելված են, կամ վստահորդի հանձնարարությունները կարող են հանգեցնել փաստաբանի կողմից ՀՀ օրենսդրության կամ Կանոնագրքի խախտմանը.

2) վստահորդը պնդում է ակնկալվող արդյունքի ձեռքբերումը, որը օբյեկտիվորեն դարձել է անհնար՝ նոր ի հայտ եկած հանգամանքների կամ փաստերի բերումով,

3) վստահորդը թույլ է տալիս իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կոպիտ խախտումներ,

4) հանձնարարության պատշաճ կատարումը անհնար է դառնում վստահորդի կողմից փաստաբանի խորհուրդներին հակառակ գործողություններ կատարելու հետևանքով,

5) վստահորդը կատարում է փաստաբանի պատիվը, արժանապատվությունը և

հեղինակությունը անվանարկող գործողություններ,

6) վստահորդը հրաժարվում է կատարել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով նախատեսված վճարումները:

Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ *Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝*

1) վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ...:

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին, այդ թվում Պալատի կողմից հավատարմագրված այլ պետության փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Վերոգրյալի համատեքստում անդրադառնալով Փաստաբանին վերագրվող վարքագծին Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Ըստ այդմ, վկայակոչված կանոնների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ վստահորդի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունից բացի վստահորդի փաստաբանի, այդ թվում Պալատի կողմից հավատարմագրված այլ պետության փաստաբանի, համար սահմանվում են նաև այլ պարտականություններ, որոնք ենթակա են կատարման ինչպես հանձնարարության կատարման ընթացքում, այնպես էլ դրա ավարտին՝ մասնավորապես, պայմանագիրը լուծելուց հետո վստահորդին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի չի կատարվել աշխատանք:

Ընդ որում, որ Կանոնագրքի 3.8.4 ենթակետն իր հերթին, փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում որոշակիություն և կանխատեսելիության համատեքստում՝ որպես իրավական երաշխիք՝ ի թիվս այլնի, նախատեսում է պայմանագիրը լուծելիս որոշակի գործողություններ փաստացի կատարված չլինելու դեպքում հոնորարի մի մասը վերադարձնելու փաստաբանի պարտավորությունը, ***եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:***

Այլ կերպ ասած, Կանոնագրքի նշված դրույթի կարգավորման կիրառման համար անհրաժեշտ է որոշակի վավերապայմանների միաժամանակյա առկայությունը՝ մասնավորապես,

1. *Փաստաբանի և վստահորդի միջև* ***պայմանագիրը լուծված լինելը,***
2. *Փաստաբանի կողմից իրեն տրված հանձնարարության շրջանակներում* ***որոշակի գործողություններ կատարված չլինելը,***
3. *վճարված գումարը վերադարձնելու* ***հարցը պայմանագրով կարգավորված չլինելը:***

Հարկ է նշել, որ Դիմողն, ըստ էության, Փաստաբանին վերագրում է իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի հետագա կատարումից անհիմն հրաժարվելու, ինչպես նաև պայմանագիրը լուծելիս պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի չի կատարվել աշխատանք, վստահորդին չվերադարձնելու վարքագիծը:

Կարգապահական վարույթի շրջանակներում վերը նշված հանգամանքները հնարավոր է պարզել, պատասխանելով մասնավորապես հետևյալ հարցերին.

- ***արդյո՞ք առկա էին Կանոնագրքի 3.8.2-րդ կետով սահմանված հիմքերը Դիմողի և Փաստաբանի միջև կնքված Պայմանագիրը (միակողմանի Փաստաբանի կողմից) լուծելու համար,***
- ***արդյո՞ք Պայմանագիրը լուծելիս Փաստաբանը պարտավոր էր Դիմողին վերադարձրել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարել:***

Համադրելով սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրություններն ու ապացույցները մեջբերված նորմերի ու հիմնավորումներին, ինչպես նաև անդրադառնալով դրանց վերը ներկայացված հարցադրումների համատեքստում, Հանձնաժողովն արձանագրել է, որ Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերի պաշտպանությունը, ինչի կապակցությամբ նրանց միջև կնքվել է Պայմանագիր, որով Փաստաբանը պետք է իրականացներ վերջինիս շահերի պաշտպանությունը թիվ ԱՐԴ/0724/02/24 քաղաքացիական գործով ՀՀ ընդհանուր

իրավասության առաջին ատյանի, ՀՀ վերաքննիչ և ՀՀ վճռաբեկ դատարաններում, ինչի համար Դիմողը վճարել է որոշակի գումար:

Տրված հանձնարարությանը համապատասխան Փաստաբանն իրականացրել է մի շարք գործողություններ, ինչից հետո թիվ ԱՐԴ/0724/02/24 քաղաքացիական գործով վճռի հրապարակման օր է սահմանվել 03.03.2025 թվականը, ինչի հաշվառմամբ Փաստաբանը համարել է իր պարտավորությունները կատարած: Հետագայում Դատարանը նշված գործի քննությունը վերսկսել է, նշանակելով դատական նիստ 29.04.2025 թվականին, ինչի կապակցությամբ Փաստաբանը պահանջել է Դիմողից հատուցել լրացուցիչ ծախսերը, քանի որ գործի ընթացքը տևել է բավականին երկար, սակայն Դիմողը կարծել է, որ Փաստաբանը հրաժարվում է ծառայությունների հետագա մատուցումից:

Նման պայմաններում, Փաստաբանը չի լուծել Պայմանագիրը և չի հրաժարվել ծառայությունների հետագ մատուցումից, շարունակել է ստանալ ծանուցումներ Դատարանից, իսկ թիվ ԱՐԴ/0724/02/24 քաղաքացիական գործով 04.06.2024 թվականի վճռով Դիմողի հայցը բավարարվել է մասնակի և այն մտել է ուժի մեջ:

Տվյալ դեպքում, գործում առկա ապացույցների ու մեջբերված իրավական նորմերի համադրության արդյունքում, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Դիմողի ու Փաստաբանի միջև կնքված Պայմանգիրը, առնվազն Դիմողի կողմից հաղորդումը Պալատ ներկայացնելու պահի դրությամբ, փաստացի լուծված չի եղել, իսկ Փաստաբանն ըստ էության չէր հրաժարվել ծառայությունների հետագա մատուցումից, դեռ ավելին շարունակում էր ստանալ դատավարական փաստաթղթեր թիվ ԱՐԴ/0724/02/24 քաղաքացիական գործով, որը ավարտվել է Դիմողի հայցի մասնակի բավարարմամբ, ինչի մասով Դիմողը որևէ դժգոհություն չի ունեցել:

Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ Դիմողի դժգոհությունն ըստ էության ծագել են այն կապակցությամբ, որ Փաստաբանը պահանջել է հատուցել ծառայությունների մատուցման ընթացքում ծագած լրացուցիչ ծախսերը, ինչը սակայն չէր ենթադրում Պայմանագրի լուծում:

Այս համատեքստում, Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ Պայմանագրի միակողմանի Փաստաբանի կողմից լուծված չլինելու, ինչպես նաև գործի փաստացի ավարտված լինելու պայմաններում բացակայում է նաև Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 1-ին պարբերության կիրառման հիմքերը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործի շրջանակներում բացակայում է փաստաբան Էլադա Էդուարդի Ղահրամանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Էլադա Էդուարդի Ղահրամանյանի (արտոնագիր՝ ԱՀ թիվ 67, հավատարմագիր՝ թիվ 47) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի,

ինչպես նաև Կանոնագրքի 3.8.2 և 3.8.4 (1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-25066 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25066-2-Ա
18 հունիսի 2025թ.
ք.Երևան